

Արձանագրություն №6/2019-2020

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2019թ. նոյեմբերի 14-ին տեղի ունեցած թիվ 6 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 67-ը (վաթսուները):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը:

Ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում (զեկ.՝ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Ն.Ն. Մարտիրոսյան, Խ. Վ. Ներկարարյան):
2. «ԵՊՀ Դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի և մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կարգի հաստատում (զեկ.՝ պրոռեկտոր Ռ.Հ. Բարխուդարյան):
3. ԵՊՀ որոշ ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատում (զեկ.՝ անձնակազմի կառավ. և իրավ. ապահովման վարչության պետ Ա. Ա. Թադևոսյան):
4. ԵՊՀ 2019-2020 ուստարվա օտարերկրյա ասպիրանտների ուսման վարձի չափերում փոփոխություն կատարելու մասին (զեկ.՝ միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Ա. Մարգարով):
5. ԵՊՀ բիզնես դպրոցի ստեղծման մասին (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Գ.Գ. Գևորգյան):
6. ԵՊՀ լեզվի կենտրոնի ստեղծման մասին (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Գ.Գ. Գևորգյան):
7. ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետին կից «Ամերիկյան հետազոտությունների կենտրոնի» ստեղծման մասին (զեկ.՝ միջազգային համագործակցության վարչության պետ Ա.Ա. Մարգարով):
8. Հաղորդում դասախոսական կազմի կոմպետենցիաների վերաբերյալ (զեկ.՝ պրոռեկտոր Է.Վ. Ասրիյան):
9. Հաղորդում 2019-2020 ուստարվա Բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):
10. Հաղորդում 2019-2020 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Գ. Ժամհարյան):

11. Հաղորդում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2018-2019 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Ն. Գ. Ժամհարյան):
12. Տեղեկատվություն 2018-2019 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին (զեկ.՝ ուսումնամեթոդական վարչության պետ Ն. Գ. Ժամհարյան):
13. Հաղորդում ԵՊՀ ՈՒԳԸ 2018-2019 ուստարվա գործունեության մասին (զեկ.՝ ՈՒԳԸ նախագահ Վ.Ա. Շերենց):

Ընթացիկ հարցեր

14.1. ԵՊՀ արաբագիտության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Սոնա Տոնիկյանի և նույն ամբիոնի դասախոս Երվանդ Մինասյանի «Գրական արաբերենի շարահյուսությունը վերլուծության օրինակով» աշխատանքը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցով ՀՀ ԿԳՄՍՆ-ին միջնորդելու մասին:

14.2. ԵՊՀ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դոցենտ Ռ. Աղամյանի «Անօրգանական քիմիա» երկհատոր դասագրքի 2-րդ հատորի «Անցումային տարրերի քիմիա» առաջին գրքի հրատարակության երաշխավորման մասին:

Օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.** - Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհման մասին:
Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ն. Ն. Մարտիրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Խ. Վ. Ներկարարյանը ներկայացրեցին պրոֆեսորի, դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Պրոֆեսորի կոչման հավակնորդն էր.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Առաքելյան Մարինե Սեմյոնի	Կենդանաբանության ամբիոնի վարիչ

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Հայրապետյան Մելսակ Վազգենի	Ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոնի ասիստենտ

2.	Մովսեսյան Հովսեփ Իսրայելի	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակ-ի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի ասիստենտ
----	---------------------------	--------------------------------------------------------------------------------------------------------------

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գ. Գևորգյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Գալստյան Վաչագան (նախագահ)
2. Վարդևանյան Պողոս
3. Բրուտյան Անահիտ

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 67 անդամներից 67-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Վ. Գալստյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Պրոֆեսորի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Առաքելյան Մարինե Սեմյոնի	65	2	0

Դոցենտի կոչում շնորհելու համար անցկացված քվեարկության արդյունքներն էին.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Հայրապետյան Մեխակ Վազգենի	65	2	0
2.	Մովսեսյան Հովսեփ Իսրայելի	64	2	1

Որոշեցին - Դիմել ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն որակավորման կոմիտե՝ պրոֆեսորի և դոցենտի կոչում շնորհելու վերաբերյալ ԵՊՀ գիտական խորհրդի որոշումը հաստատելու միջնորդությամբ:

2.Լսեցին.- «ԵՊՀ դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի և մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կարգի հաստատման մասին: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ այդ հարցը ներառվել է օրակարգում, սակայն նիստում չի հաստատվի, քանի որ ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման ու փորձաքննության մշտական հանձնաժողովն առաջարկել է դա հաստատել ռեկտորի հրամանով: Գ. Գևորգյանը, ներկայացնելով կարգի որոշ մանրամասներ, նշեց, որ ոլորտները հստակ բաժանված են, յուրաքանչյուր ոլորտի համար ձևավորվելիք հանձնաժողովները կորոշեն անհրաժեշտ չափորոշիչները: Տարբեր ոլորտներում, տարբեր ուղղությունների հետ կապված կլինեն առանձին մոտեցումներ: Մրցույթը չի սահմանափակվի որևէ անվանակարգում դասախոսի հաղթող ճանաչվելով, այլ կլինի հաղթող ճանաչված դասախոսի օրինակելի դասախոսությունների նկարահանում: Նկարահանման նպատակները երկուսն են՝ նախ, հանրությունը

կծանոթանա այն ներկայացուցչի հետ, ով կճանաչվի հաղթող և կիմանա, թե ինչի համար է մրցույթում հաղթել: Մյուս կողմից, կստեղծվի մասնագիտական հարուստ տեսադարան, որը օգտակար կլինի ուսանողների համար: Նա նշեց, որ մրցույթը կանցկացվի 4 անվանակարգերում՝ բնագիտական, ֆիզիկամաթեմատիկական, բանասիրական և հասարակագիտական: Յուրաքանչյուր տարի նախատեսվում է 10 մրցանակ: Ի պատասխան գիտխորհրդի անդամների հնչեցված հարցերի՝ Գ. Գևորգյանը պարզաբանեց, որ չի բացառվում, որ որևէ տարի հաղթողներ չլինեն թեկնածությունների անհամապատասխանության պատճառով: Մրցույթին դիմելու մոտիվացվածությունը կարող է լինել 1,3 մլն ՀՀ դրամի պարզևավճարը (ներառյալ օրենսդրությամբ նախատեսված հարկերը): Անհրաժեշտ է, որ թեկնածուն ունենա կամ իր գործընկերների, կամ ուսանողների երաշխավորությունը՝ վերջինիս դասախոսությունների արժեքավոր ու կարևոր լինելու հարցում: Առաջիկա փուլը լինելու է ֆակուլտետներից մրցութային հանձնաժողովներում թեկնածությունների առաջադրումը:

Որոշեցին. - «ԵՊՀ դասավանդման գերազանցության մրցանակ» ամենամյա մրցույթի և մրցանակաբաշխության կազմակերպման և անցկացման կարգի հաստատումը թողնել ռեկտորի իրավասությանը:

3.Լսեցին. - ԵՊՀ որոշ ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատման մասին: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության կանոնադրությունը հանվում է քննարկումից, քանի որ ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության մշտական հանձնաժողովում եղել են մի շարք հարցադրումներ վարչության գործառույթների ու իրավասությունների հետ կապված: Նպատակահարմար է հետաձգել վարչության կանոնադրության հաստատումը, քանի որ դրանում լրամշակման ու նոր մոտեցումների ամրագրման, գործառույթների փոփոխության անհրաժեշտություն է առաջացել: Կանոնադրության հաստատման հետաձգման պատճառներից մեկը վարչության գործառույթների հետ է կապված: Մասնավորապես, ուսումնամեթոդական վարչության տեսուչների՝ դասապրոցեսի ստուգումների գործընթացը դժգոհությունների տեղիք է տալիս: Սակայն, դա անհրաժեշտ է՝ ստուգելու դասապրոցեսի կայանալու հանգամանքը: Գ. Գևորգյանը, որպես այդ գործընթացի բարելավման քայլ, առաջարկեց դիտարկել լսարաններում դասապրոցեսի, մասնավորապես՝ դասախոսների հաճախելիության հանգամանքի ֆիքսման նպատակով տեսախցիկների տեղադրման առաջարկը: Լսարաններում տեսախցիկների տեղադրման ու համապատասխան ցանցի ստեղծման պարագայում վարչությունում առկա համապատասխան հաստիքները և այդ գործառույթները կկրճատվեն: Գ.

Գևորգյանը վեց, թե հնարավոր է, որ առաջարկի իրագործումը որպես մարդու իրավունքների խախտում դիտվի, ինչին ի պատասխան իրավագիտության ֆակուլտետի դեկան Գագիկ Ղազինյանը փաստեց, որ մարդու իրավունքների խախտում չկա, բայց հավելեց, որ դասերի անցկացմանը հետևելը դեկանատների գործառույթն է: Գեղամ Գևորգյանը նշեց, որ տեսանյութերին կարող են հետևել դեկանատների աշխատակիցները: Առաջարկը քննարկումների առիթ դարձավ, որի արդյունքում որոշվեց հետագայում մանրամասնորեն պարզաբանել հարցը:

Անձնակազմի կառավարման և իրավական ապահովման վարչության պետ Արմեն Թադևոսյանը գիտխորհրդի հաստատմանը ներկայացրեց ԵՊՀ հաշվապահական հաշվառման վարչության կանոնադրությունը, որով սահմանվում են վարչության գործառույթները և իրավասությունը, ինչպես նաև կառուցվածքը, գործունեության կազմակերպումը և ղեկավարումը: Նա նշեց, որ կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված, երբ ԵՊՀ հաշվապահության վերակազմավորման արդյունքում ստեղծվեցին 2 նոր ստորաբաժանումներ, նորաստեղծ հաշվապահական հաշվառման վարչության նոր կանոնադրության հաստատման անհրաժեշտություն էր առաջացել: ԵՊՀ ֆինանսահաշվային ամբիոնի վարիչ Հայկ Մնացականյանը, մեջբերելով կանոնադրության 7,2, 6,3 կետերը, որը սահմանում է, թե վարչության գործառույթներից և իրավասություններից է ֆինանսական գործունեության բացասական երևույթների վերհանումը և դրա մասին ղեկավարությանը ժամանակին զգուշացումը, ներսնտեսական ռեսուրսների բացահայտումը և հավաքագրումը, հետաքրքրվեց, թե արդյո՞ք իրեն ստուգելը պետք է լինի վարչության գործառույթը: Վերջինս նկատեց, որ դա կարող է դիտարկվել որպես ֆինանսական գործունեության գործառույթ, քանի որ խոսքը վերաբերում է ֆինանսական գործունեության վերլուծության՝ առաջարկելով կանոնադրության մեջ այդ մասով կատարել խմբագրում:

Որոշեցին. - Հաստատել ԵՊՀ հաշվապահական հաշվառման վարչության կանոնադրությունը՝ առաջարկված խմբագրմամբ:

4.Լսեցին. - ԵՊՀ 2019-2020 ուստարվա օտարերկրյա ասպիրանտների ուսման վարձի չափերում փոփոխություն կատարելու մասին: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ 2019 թվականի վարձի չափերում հասմոթային տասնիասումված գործակիցներով օտարերկրյա ուսանողների վարձաչափերի համապատասխանեցման խնդիր կա, ինչը մեխանիկական գործընթաց է:

Որոշեցին - հաստատել ԵՊՀ 2019-2020 ուստարվա օտարերկրյա ասպիրանտների ուսման վարձի չափերում փոփոխությունները:

5.Լսեցին. - «ԵՊՀ բիզնես դպրոցի» ստեղծման մասին հարցը: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը ստեղծվելիք դպրոցի վերաբերյալ նշեց, որ այն նույնպես ինքնաֆինանսավորվող ստորաբաժանում է լինելու, Համալսարանին տրամադրելու է որոշակի լրավճար և պայմանականորեն գործելու է Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում, բայց որպես առանձին կառույց: Քանի որ դեռևս պարզ չէ հոգաբարձուների խորհրդի անցկացման ժամկետը և որպեսզի այդ դպրոցի ստեղծումը կախված չլինի այդ հանգամանքից և չհետաձգվի, առաջակվում է այդ ծրագիրն իրականացնել մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի շրջանակում, քանի որ տարածքային պայմանները տրամադրվել է այդ ֆակուլտետում: Ծրագրի գործարկումից հետո բիզնես դպրոցի ստեղծման առաջարկը կքննարկի արդեն հոգաբարձուների խորհուրդը: Այդ ֆակուլտետում դպրոցի ստեղծումը ժամանակավոր բնույթ է կրում՝ հոգաբարձուների խորհրդի նիստի ԵՊՀ բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտոր Ռաֆայել Բարխուդարյանը պարզաբանեց, որ դպրոցը վճարովի հիմունքներով իրականացնելու է 4 հիմնական ծրագիր: Բիզնես դպրոցում

իրականացվելու են կարճաժամկետ ծրագրեր գործարարների համար, կորպորատիվ բիզնեսի ներկայացուցիչների համար փաթեթային ծրագրեր: Բացի դրանից՝ նախատեսվում են մագիստրոսական ծրագրերի իրականացում և խորհրդատվություն: Հարցի առնչությամբ Ֆարմացիայի ինստիտուտի տնօերն Ա. Սադյանը նկատեց, որ ներկայում լուրջ խնդիր է բիզնես պլանների կազմումը, քանի որ բիզնեսի ոլորտի շատ ներկայացուցիչներ չեն կարողանում նման պլաններ կազմել: Վերջինս առաջարկեց ծրագրերում ներառել նաև այդ ուղղությունը, որը բավական շահութաբեր կլինի նաև ԵՊՀ-ի համար: Գ. Գևորգյանը կարևորեց նաև բիզնես հոգեբանության ուղղությունը, որը արդիական է: Իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանն էլ կարևորեց գործարար իրավունք ծրագիրը՝ պատրաստականություն հայտնելով համագործակցել այդ ուղղությամբ գործունեություն սկսող դպրոցի հետ:

Որոշեցին. - «ԵՊՀ բիզնես դպրոց» ստեղծելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին:

6.Լսեցին. - ԵՊՀ լեզվի կենտրոնի ստեղծման մասին հարցը: Ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ երկար տարիներ խոսվել է ԵՊՀ-ում միասնական լեզուների կենտրոնի ստեղծման գաղափարի մասին և չնայած առաջարկվող կենտրոնը չի նախատեսում դա, այդուհանդերձ, նախնական քայլ կարող է լինել այդ գաղափարի իրականացման համար: Ըստ նախաձեռնության՝ նախատեսվում է որոշ լեզուների գծով ստեղծել վճարովի դասընթացներ ԵՊՀ դասախոսների ներգրավմամբ: Կենտրոնը ինքնաֆինանսավորվող է և կենտրոնի ստացած եկամուտների 20 տոկոսը հատկացվելու է ԵՊՀ-ին: Կենտրոնի գործունեության ընդլայնման ու զարգացման արդյունքում հետագայում հնարավոր կլինի լեզուները հանել դասացուցակներից, ֆակուլտետներից, կենտրոնացնել միասնական մեկ ստորաբաժանման մեջ: Համալսարանը կվճարի 1 կիսամյակի համար, ուսանողը այդ կենտրոնում կսովորի անհրաժեշտ լեզուն, կհանձնի քննություն և ստացած գնահատականի սերտիֆիկատը կներկայացնի ֆակուլտետ: Ստացած գնահատականը չբավարարելու դեպքում ուսանողը սեփական վճարման միջոցով կարող է կրկին մասնակցել դասընթացների և բարձրացնել իր գնահատականը: Նախաձեռնության հեղինակ ԵՊՀ անգլերեն լեզվի թիվ 1 ամբիոնի վարիչ Մ. Ապրեայանը նշեց, որ նախնական որոշվել է կենտրոնն անվանել «Օտար լեզուների դասավանդման և միջազգային թեստավորման կենտրոն»: Կենտրոնի ստեղծումը երկար սպասված գործընթաց է, և ԵՊՀ դասախոսները լավագույնս կարող են սովորեցնել լեզուներ թե՛ ուսանողներին, թե՛ գիտնականներին, թե՛ գործարարներին և հանրության այլ խմբերի ներկայացուցիչներին: Կենտրոնում կարող են ներգրավվել համալսարանական համապատասխան ամբիոնների դասախոսները՝ ռուսերենի, եվրոպական լեզուների, արևելյան լեզուների գծով մասնագետները: Նա փաստեց, որ կենտրոնում կարող են սովորել ինչպես հայաստանյան, այնպես էլ օտարերկրյա բուհերի և կազմակերպությունների ներկայացուցիչները: Կենտրոնում դասավանդելու են նաև հայոց լեզու, և ըստ այդմ՝ կենտրոնի՝ նախապես որոշված անվանումը կարող են փոխել՝ հանելով օտար բառը: Գ. Գևորգյանը նշեց, որ անկախ միջազգային հավաստագրեր ունենալ-չունենալու հանգամանքից, ԵՊՀ-ն այդ դասընթացներն անցած ունկնդիրներին կտրամադրի համալսարանական հավաստագիր:

Որոշեցին. - «ԵՊՀ լեզուների դասավանդման և տեստավորման կենտրոն» ստեղծելու վերաբերյալ առաջարկություն ներկայացնել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին:

7.Լսեցին. - ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետին կից «Ամերիկյան հետազոտությունների կենտրոնի» ստեղծման մասին: ԵՊՀ միջազգային համագործակցության վարչության պետ Ա. Մարգարովը ներկայացրեց, որ այդ կենտրոնը նախատեսվում է ստեղծել դրամաշնորհային ծրագրի շրջանակներում, արդեն իսկ առաջին տարվա գործունեության համար հատկացված է համապատասխան ֆինանսավորումը, և կա ևս երկու տարվա ֆինանսական ապահովման նախնական պայմանավորվածություն: Ֆինանսավորման աղբյուրը Հայաստանում ԱՄՆ դեսպանատունն է, որը երկար ժամանակ ցանկանում էր Հայաստանում նման ծրագիր իրականացնել: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանն ավելացրեց, որ այդ ծրագիրը ԵՊՀ-ից որևէ ֆինանսական պարտավորություն չի պահանջում: Ի պատասխան գիտխորհրդի անդամների հարցադրումների՝ Ա. Մարգարովը պարզաբանեց, որ կենտրոնն ունենալու է գործունեության կրթական ու հետազոտական ուղղություններ՝ մագիստրոսական և հետազոտական ծրագրերի, ինչպես նաև՝ դրամաշնորհային ծրագրերի տեսքով:

Որոշեցին. - ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետին կից «Ամերիկյան հետազոտությունների կենտրոն» ստեղծելու առաջարկը ներկայացնել ԵՊՀ հոգաբարձուների խորհրդին:

8.Լսեցին. - ԵՊՀ դասախոսական կազմի կոմպետենցիաների մասին հարցը: ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների գծով պրոռեկտոր Էլինա Ասրիյանը՝ հաղորդեց դասախոսական կազմի կոմպետենցիաների սահմանման վերաբերյալ ասելով, որ այն պիլոտային ծրագիր է և բխում է ԵՊՀ 2014-2016 զարգացման ռազմավարական ծրագրի դրույթներից ու ինստիտուցիոնալ հավատարմագրման պահանջներից: Դեռևս 2014-2015 ուստարում նախատեսված էր կրթական ծրագրերի մասնագրերում դասախոսական կազմին ներկայացվող ընդհանուր և մասնագիտական կոմպետենցիաների ամրագրում: Ըստ նրա՝ ծրագիրը ենթադրում է, որ յուրաքանչյուր կրթական ծրագրում ներառված լինեն տվյալ ծրագրի վերջնարդյունքին նպաստող և տվյալ կրթական ծրագիրը սպասարկող դասախոսների ընդհանուր և մասնագիտական կոմպետենցիաներ: Քանի որ կրթական ծրագրերը տարբեր են, և ըստ այդմ՝ տրամաբանական է, որ դրանց վերջնարդյունքները ևս տարբեր են, հետևաբար դասախոսների համար պետք է մշակվեն համապատասխան կոմպետենցիաներ: Է. Ասրիյանը նաև նշեց, որ ծրագիրը բաց է այլ կրթական ծրագրերի ղեկավարների համար:

Որոշեցին. - ԵՊՀ դասախոսական կազմի կոմպետենցիաների մասին հաղորդումն ընդունելի գիտություն:

9.Լսեցին. - 2019-2020 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը ներկայացրեց ընդունելության արդյունքները, ըստ որոնց՝ բակալավրիատի առկա ուսուցմամբ ԵՊՀ է ընդունվել 2899 դիմորդ: Դա եղել է ամենամեծ ընդունելության ցուցանիշը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետ միասին ողջ

հանրապետությունում ընդունվածների թվի մեջ: Նրա փոխանցմամբ՝ մագիստրատուրա առկա ուսուցմամբ ԵՊՀ է ընդունվել 1,089, հեռակա ուսուցմամբ՝ 232 դիմորդ: Ընդհանուր դիմորդների թիվը կազմել է 3404: Առաջին կուրս ընդունվածների թվից եղել է արտահոսք. 356

ուսան

վարձը չվճարելու, չեն ընդգրկվել ցուցակներում: Հեռակա ուսուցման գծով դիմորդների թիվը կազմել է 430, որից 298-ը հանձնել են պահանջներին համապատասխան ընդունելության քննություններ: Նոյեմբերի 1-ի դրությամբ ԵՊՀ-ում սովորողների թիվը կազմել է 13954 ուսանող, ինչը նախորդ տարվա համեմատ փոքր է մոտ 800-ով: ԻԿՄ դեկան Վ. Դումանյանը հետաքրքրվեց, թե որ ֆակուլտետներում և որ մասնագիտությունների գծով չեն լրացվել հայտարարված տեղերը և որ մասնագիտությունների գծով են 1 կամ 2 քննությամբ նվազագույն դրական միավորով ընդունվածները, ինչին ի պատասխան Գ. Գևորգյանը նշեց, որ ըստ կատարված ուսումնասիրության՝ մեկ քննությունից 9 կամ 10 միավորից ցածր գնահատականով համալսարան ընդունված ուսանողների թիվը բավական բարձր է եղել: Կան մասնագիտություններ, որտեղ առնվազն 1 քննության միավորը 10-ից պակաս է և այդ ցուցանիշով ընդունվածների թիվը գերազանցում է 50 տոկոսը: Վերջինս նաև նշեց, որ ցանկալի չէ 2 աստղանիշով քննությունների արդյունքներով համալսարան ընդունելությունը՝ առավել արդարացված համարելով հանել այդ կարգը, ինչպես նաև համալսարան ընդունելության համար պարտադիր դարձնել հայոց լեզու առարկայի քննությունը:

Որոշեցին. - 2019-2020 ուստարվա բակալավրիատի և մագիստրատուրայի ընդունելության արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

10.Լսեցին.- Հաղորդում 2019-2020 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը ներկայացրեց, որ 2019-2020 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների գումարային թիվը կազմել է 742068 ժամ, ինչը համադրելի է նախորդ տարվա ցուցանիշի հետ: 31,09 տոկոսից ավելին կազմել են գործնական ու սեմինար պարապմունքների, 22,69 տոկոսը ավարտական ու մագիստրոսական թեզերի դեկավարման ժամերը: Հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի թիվը կազմել է 1080, ներքին համատեղությամբ դասախոսներինը՝ 109, արտաքին համատեղությամբ դասախոսներինը՝ 237: Ժամավճարային ֆոնդը կազմել է 66017 ժամ, ինչն ավելին է նախորդ տարվա համեմատ: Հաղորդման վերաբերյալ հայ բանասիրության ֆակուլտետի դեկանը նկատեց, որ պրոֆեսորադասախոսական հաստիքների թիվը ավելի փոքր է, քան վարչական ու սպասարկող անձնակազմինը, ուստի դասախոսական կազմի աշխատավարձերի բարձրացման համար արդյոք այդ հատվածից կրճատումների անհրաժեշտություն չկա: Ի պատասխան Գ. Գևորգյանը նշեց, որ կրճատումների տեղեր կան ամենուր, այդ թվում ամբիոնների մասով, և կառուցվածքային առաջարկված փոփոխությունների նպատակը նաև որոշակի կրճատումներն են: Որոշ օղակներում առկա է միավորման, օպտիմալացման անհրաժեշտություն՝ վարչական մասից մինչև ամբիոններ:

Որոշեցին. - 2019-2020 ուստարվա ամբիոնային բեռնվածությունների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

11.Լսեցին.- դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2018-2019 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին: Ներկայացնելով ուսանողական հարցումների արդյունքները՝ Հ. Ժամհարյանն ասաց, որ այս տարի գրանցվել է մասնակցության նվազում, որը կազմել է 28.49 %: Առավել ակտիվ մասնակցություն գրանցվել է մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնում՝ **մոտի՞Ց0**, ինչի ամենացածր ցուցանիշը եղել է աստվածաբանության ֆակուլտետում՝ 9,52 տոկոս: Ըստ ֆակուլտետների հարցման արդյունքների գնահատականների միջինը 4.68 ամենաբարձրը գրանցվել է աշխարհագրության և երկրաբանության, իսկ ամենացածրը՝ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետներում: Դեկանի և դեկանի տեղակալների աշխատանքի գնահատման ամենաբարձր ցուցանիշը ռուս բանասիրության, իսկ ամենացածրը՝ ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետներինն է եղել: Տեղեկատվական հատվածի հարցման արդյունքների համաձայն՝ հարցմանը մասնակցած 39 ուսանող նշել է քննաշրջանի ընթացքում դրամի դիմաց քննություն/ստուգաք ստանալու մասին, ինչը կազմում է հարցվածների 0.53 տոկոսը: Գիտխորհրդի ուսանող անդամ Նարեկ Մարգարյանը նկատեց, որ ուսանողական հարցման նման ցածր թիվը պայմանավորված է համալսարանական էլ. փոստից ուսանողության քիչ օգտվելու հանգամանքով, քանի որ համակարգը լավ չի գործում: Ի պատասխան ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը նշեց, որ այդ ուղղությամբ քայլեր են իրականացվում և առաջիկայում համալսարանում ոչ միայն էականորեն կբարելավվի համացանցի որակը, այլև ծառայությունների շրջանակը:

Որոշեցին. - դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ 2018-2019 ուստարվա ուսանողական հարցումների արդյունքների մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

12.Լսեցին.- 2018-2019 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին: Ուսումնամեթոդական վարչության պետ Հ. Ժամհարյանը ներկայացրեց, որ ուստարվա նպաստաների հատկացման արդյունքները, ըստ որի՝ պետության կողմից հատկացված 1473 անվճար տեղերից մրցույթով լրացվել է 1431-ը, 42 տեղ մնացել է թափուր: Ըստ ցուցանիշների՝ ցածր կուրսերում ավելի շատ են գրկվում անվճար տեղերից, քան բարձրերում: Փոխատեղման հետևանքով թափուր մնացած տեղերը չեն լրացվում հիմնականում բնագիտական ֆակուլտետներում: Փոխատեղման արդյունքում լինում են բավական խնդրահարույց դեպքեր, երբ հավասար ՄՈԳ-եր են լինում, և տարանջատումը բավական դժվար է լինում, առաջանում են բարդ իրավիճակներ: Ներկայացված արդյունքների առնչությամբ արված դիտարկմամբ՝ ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը նկատեց, որ անհասկանալի է այն դեպքը, երբ օրինակ, 3-րդ կուրսում 9 ուսանող ունեցել է 20 ՄՈԳ: Ընդհանրապես 20 միավոր ՄՈԳ ունենալը չափազանց բացառիկ բան է և նշանակում է, որ տվյալ ուսանողը բացարձակապես չի սխալվել, սայթաքել, ինչը գրեթե անհավանական է: Այն դեպքում, երբ մեկ կուրսում 20 միավոր ՄՈԳ ունեցող ուսանողների թիվը 9 է, տվյալ կրթության որակի հետ կապված հարց է առաջանում:

Որոշեցին. - 2018-2019 ուստարվա արդյունքներով ԵՊՀ ուսանողների փոխատեղման (ռոտացիա) մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

13.Լսեցին.- ԵՊՀ ՌԻԳԸ 2018-2019 ուստարվա գործունեության մասին: ՌԻԳԸ նախագահ Վ. Շերենցը ներկայացրեց հիմնական արդյունքները, ըստ որի՝ ուստարվա ընթացքում կազմակերպվել է 369 միջոցառում, որոնց մեծ մասը կազմել են դասընթացները, սեմինար-քննարկումները և կլոր-սեղանները: Թողարկվել է 5 ժողովածու, որոնցից 3-ը վերաբերում են հումանիտար և հասարակագիտական, 2-ը՝ բնագիտական և ֆիզիկամաթեմատիկական ուղղություններին: Տպագրված հոդվածների թիվը կազմել է 176: Կազմակերպվել է 6 գիտաժողով, որոնցից ոչ մեկը չի ունեցել ֆակուլտետային բնույթ, մեծ մասը եղել են միջազգային գիտաժողովներ: ՌԻԳԸ ընդհանուր անդամների թիվը կազմել է 146, ինչը էականորեն ցածր է եղել նախորդ ուստարվա ցուցանիշներից: Բակալավրիատի ուսանող անդամների թիվը բավական մեծ է, և այդ միտումը շարունակում է աճել: Ըստ նրա՝ կառույցին անդամակցողների թվի նվազումը կապված չէ ՌԻԳԸ-ի կամ բուհի վատ կամ անարդյունավետ աշխատանքի հետ, այլ այն հանգամանքի հետ, որ փոփոխվող արդի աշխարհում երիտասարդությունն ավելի վաղ տարիքից է անցնում աշխատանքի և կամավորության սկզբունքով չեն ցանկանում աշխատել կառույցում: Ռեկտորի Ժ/պ Գ. Գևորգյանը ողջունեց ՌԻԳԸ-ի որակական, այլ ոչ քանական զարգացման ուղղությամբ քայլերն ու միտումները:

Որոշեցին. - ԵՊՀ ՌԻԳԸ 2018-2019 ուստարվա գործունեության մասին հաղորդումն ընդունել ի գիտություն:

14.Լսեցին.- ԵՊՀ արաբագիտության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Սոնա Տոնիկյանի և նույն ամբիոնի դասախոս Երվանդ Մինասյանի «Գրական արաբերենի շարահյուսությունը վերլուծության օրինակներով» աշխատանքը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցով ՀՀ ԿԳՄՄՆ-ին միջնորդելու մասին:

Որոշեցին. - ԵՊՀ արաբագիտության ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Սոնա Տոնիկյանի և նույն ամբիոնի դասախոս Երվանդ Մինասյանի «Գրական արաբերենի շարահյուսությունը վերլուծության օրինակներով» աշխատանքը որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

15.Լսեցին.- ԵՊՀ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դոցենտ Ռ. Ադամյանի «Անօրգանական քիմիա» երկհատոր դասագրքի 2-րդ հատորի «Անցումային տարրերի քիմիա» առաջին գրքի հրատարակության երաշխավորման մասին:

Որոշեցին. - ԵՊՀ անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի դոցենտ Ռ. Ադամյանի «Անօրգանական քիմիա» երկհատոր դասագրքի 2-րդ հատորի «Անցումային տարրերի քիմիա» առաջին գիրքը երաշխավորել հրատարակության և որպես բուհական դասագիրք հաստատելու հարցում միջնորդել ՀՀ ԿԳՄՄՆ-ին:

Նիստի ավարտին ռեկտորի ժ/պ Գ. Գևորգյանն ասաց, որ շրջանառվում են լուրեր, ըստ որոնց՝ ինքը պատրաստվում է վաճառել ԵՊՀ «Բյուրական» ուսումնաարտադրական բազան: Հերքելով նման տեղեկատվությունը՝ նշեց, որ նախաձեռնվել է խնայված միջոցների հաշվին բազայի մեկ մասնաշենքի և ճաշարանի վերանորոգում, դռները և լուսամուտները փոխելու համար մրցույթն անցկացվել է, կան հաղթողներ: Դիտարկվելու է նաև Դիլիջանի բազայում անհրաժեշտ աշխատանքների իրականացման հնարավորությունները և այդ հարցով առաջարկ ներկայացվելու Հոգաբարձուների խորհրդին:

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ.Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

22.11.2019թ.